

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄՈՀԱՄԱԴ ԱԼԻ ՆԱԶԱՖԻ

ԱՌԵՎՏՐԱՎԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԱԶԱՏ ԳՈՏԻՆԵՐԻ
ԴԵՐԸ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ
(ԻՐԱՆԻ «ՔԻՇ» ԱԶԱՏ ԳՈՏՈՒ ՕՐԻՆԱԿՈՎ)

Ը. 00.02-« Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

Երևան -2016

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում:

Գիտական ղեկավար՝

տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Ղանթարջյան Սարգիս Լևոնի

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Մանասերյան Թաթուլ Նորայրի

տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
Անտոնյան Քրիստինե Աղասու

Առաջատար կազմակերպություն՝

Հայաստանի ազգային ագրարային համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2016թ. նոյեմբերի 25-ին, ժամը 13.30-ին, ՀՀ ԲՈՀ-ի տնտեսագիտության թիվ 015 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցեն՝ 009, ք. Երևան, Խ. Աբովյան 52:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2016 թ. հոկտեմբերի 25-ին:

**015 մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար,
տեխ. գ.դ., պրոֆ.**



Լ.Լ. Առաքելյան

ԱՄԵՆԱՆՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հետազոտության թեմայի արդիականությունը: Ջարգացող երկրները տնտեսական աճի և բարգավաճման ճանապարհին ունեն տարբեր սահմանափակումներ ու դժվարություններ և միևնույն ժամանակ առավելություններ ու հնարավորություններ: Ազատ զոնաները/գոտիները կարող են որոշ չափով կրճատել սահմանափակությունները, ակտիվացնել ազգային մակարդակում առկա պոտենցիալ կարողություններն ու առավելությունները՝ կամրջելով ներքին և արտաքին տնտեսությունը: Ազատ գոտիների ստեղծման գլխավոր նպատակներն են.

-Ազգային տնտեսության զարգացման սահմանափակումների կրճատում,

-Ազգային տնտեսությունում առկա հնարավորությունների, ներուժի և համեմատական առավելությունների օգտագործում,

-Ազգային և համաշխարհային տնտեսությունների միջև կանոնավոր ու համակարգված կապերի հաստատում ու ծավալում,

-Ազգային տնտեսության աստիճանական ինտեգրումը համաշխարհային տնտեսությանը:

Ջարգացող երկրները տնտեսական զարգացման գլխավոր նպատակների շրջանակում ազատ գոտիների միջոցով հետապնդում են նաև մի շարք ածանցյալ նպատակներ, որոնցից մենք կարևորում ենք հետևյալները.

-Օտարերկրյա կապիտալի ներգրավում, հատկապես, արտադրողական ոլորտներում,

-Արտարժույթի առավել մեծ ծավալների ներգրավում՝ ի նպաստ ազգային տնտեսության կարիքների բավարարման,

-Ազգային տնտեսությունում նորագույն տեխնոլոգիաների ներդրում;

-Ազատ գոտիներում և ազգային տնտեսությունում նոր աշխատատեղերի ստեղծում, զբաղվածության խթանում,

-Արտահանումների ընդլայնում և դիվերսիֆիկացում, արտաքին առևտրի խթանում և ընդլայնում,

-Ազգային տնտեսության զարգացման ոլորտների ընդլայնում,

-Կապիտալատար և միջանկյալ ապրանքների ներմուծում՝ առավել հարմար գներով,

-Մարդկային ռեսուրսների նախապատրաստում, տեխնիկական ուսուցման կազմակերպում և աշխատողների հմտությունների ընդլայնում ու վերապատրաստում,

-Մասնակցությունը միջազգային առևտրին՝ գործնականորեն և շոշափելի ու առարկայական կերպով,

-Ծառայությունների և սպասարկման ոլորտի աշխատանքների(տրանսպորտ, պահեստավորում, բեռնափոխադրում, ապահովագրում, զբոսաշրջություն և այլն) եկամտաբերության բարձրացում,

-Ազգային տնտեսության համեմատական առավելությունների (էժան աշխատուժի, հանքերի և ընդերքի պաշարների, գյուղատնտեսական ապրանքների և այլ առաջնային նյութերի) արդյունավետ օգտագործում,

-Տարածքային համաչափ զարգացում, թույլ զարգացած և հետամնաց շրջանների ու մարզերի առաջխաղացում:

Իրանում ազատ գոտիների հիմնադրման գլխավոր նպատակներից մեկը մեկ արտադրության վրա հիմնված տնտեսության հաղթահարումն է, ՀՆԱ-ի դիվերսիֆիկացիան և նավթից կախվածություն չունեցող տնտեսության ձևավորումը: Ազատ գոտիները պետք է հանդես գան որպես շարժիչ ուժ՝ ոչ-նավթային արտահանումների խթանման համար: Իրանում ազատ գոտիների ստեղծման մասին օրենքի ընդունումից հետո, չնայած արված արդյունավետ քայլերին, չհաջողվեց լիարժեք իրականացնել բոլոր նախանշված թիրախները և գրանցել ակնկալվող աճը:

Իրանի տնտեսության խիստ կախվածությունը նավթարդյունաբերությունից, նավթային արտադրանքի գերակշիռ մասնաբաժինը արտահանումների ընդհանուր ծավալում, բազմազգ խոշոր կորպորացիաների ինպերիալիստական քաղաքականության պատճառով միջազգային շուկաներում նավթի գների տատանումները և դրան զուգընթաց իրանական հայտնի ապրանքատեսակների՝ գորգի, ձեռքի աշխատանքների, պիստակի և այլ ապրանքների արտահանման ծավալների նվազումը, այսինքն՝ ոչ-նավթային արտահանումների փոքր ծավալները լրջորեն մտահոգում են Իրանի պետությանը, առաջ քաշելով համակողմանի մոտեցումների և լուծումների հրատապությունը:

Իրանի տնտեսության դիվերսիֆիկացման նպատակն է նվազագույնի հասցնել նավթային եկամուտներից ունեցած կախվածությունը և դրա ռիսկայնությունը, քանի որ տնտեսական դիվերսիֆիկացիան նպաստում է երկրի զարգացմանը, ինքնուրույնությանը, սակարկման հնարավորությունների մեծացմանը և առևտրի ռիսկայնության նվազմանը: Դիվերսիֆիկացումն իր հերթին հանգեցնում է արտադրվող ապրանքատեսակների տեսականու մեծացմանը և եկամտային մեկ աղբյուրից կախվածության կրճատմանը, իսկ դա պայմանավորված է նաև արտահանվող ապրանքատեսակների բազմազանությամբ: Անհրաժեշտ է ընդլայնել ոչ-նավթային ապրանքների արտադրությունն ու արտահանումը, խթանել ոչ-նավթային ոլորտների գործունեությունը, իսկ այս ուղղությամբ նշանակալի դեր կարող են խաղալ ազատ գոտիները: Հիշյալ փոխկապակցված գործընթացներն ու միտումները հիմնավորում են հետազոտության թեմայի արդիականությունը:

Հետազոտության կարևորությունը և անհրաժեշտությունը պայմանավորված են զարգացող երկրների տնտեսության բարգավաճման գործում ազատ գոտիների ակնհայտ նշանակությամբ: Իրավական և տնտեսական այս ինստիտուտները ձևավորվում են իշխանությունների կողմից ընդունված այնպիսի օրենքների և կանոնների միջոցով, որոնք առավել նպաստավոր են և ձկուն, քան երկրի մնացած տարածքում գործող օրենքները և որոշակիորեն շահագրգռում են ներքին ու օտարերկրյա ներդրողներին: Ազատ գոտիների ստեղծմամբ և որոշակի հատկացումներ ու հովանավորումներ կատարելով, պետությունը նպատակ ունի կապիտալի հոսքերն ուղղորդել առավել օգտակար ոլորտներ: Անշուշտ, պետության կողմից աջակցությունը և հովանավորումը պետք է ամրագրվի իրավական-նորմատիվ համապատասխան դաշտով և հատուկ այս գոտիների համար ընդունված համապատասխան օրենքներով:

Իրանում մի շարք պատճառներով այս դաշտում չեն ընդունվել համալիր և ամբողջական օրենքներ և գործում են մի շարք թերի իրավական ակտեր: Ուսումնասիրելով հաջողություն արձանագրած երկրների փորձն այս բնագավառում՝ տեսնում ենք, որ նրանք ձևավորել են համալիր ու արդյունավետ իրավական դաշտ և առևտրային ազատ գոտիների համար ընդունել նպատակային ու օգտակար օրենքներ: Մեր ատենախոսության թեմայի հրատապությունը բխում է նաև իրանական օրենսդիրի այս բացթողումից և այլ երկրների փորձի հետ համեմատական վերլուծության անհրաժեշտությունից: Տնտեսապես արդարացված և արդյունավետ ազատ գոտիների փորձի ուսումնասիրությունը անհրաժեշտ է ներքին օրենսդրության անկատար կողմերը բացահայտելու, աշխատող-գործատու փոխհարաբերությունների ոլորտը արդյունավետ կերպով կանոնակարգելու և իրանական օրենսդիրներին նպատակահարմար առաջարկություններ ու լուծումներ ներկայացնելու համար:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Հետազոտության գլխավոր նպատակն է քննել Իրանի առևտրային ազատ գոտիների գործունեությունը՝ տնտեսական առաջնային նպատակների իրականացման տեսանկյունից, որոնցից, մասնավորապես, կարևորվում են արտահանումների ընդլայնումը ու դիվերսիֆիկացումը, աշխատատեղերի ստեղծումը, արտարժույթային եկամուտների ապահովումը, ներքին ու օտարերկրյա կապիտալի ներգրավումը, զարգացած տեխնոլոգիաների ներմուծումը, ազգային տնտեսության և համաաշխարհային տնտեսության միջև համակարգված կապերի հաստատումը:

Ելնելով վերը նշված նպատակից հետազոտության մեջ առաջադրվել են հետևյալ խնդիրները.

1. Ուսումնասիրել Իրանի արտաքին առևտրի (ներմուծում-արտահանում) ներկա վիճակը:

2. Քննել օտարերկրյա կապիտալի ներգրավման վիճակն Իրանում:

3. Քննել զբոսարջության ոլորտի վիճակն Իրանում:

4. Վերլուծել արտաքին առևտրի (ներմուծում-արտահանում) վիճակը Քիշ ազատ գոտում և դրա դերն ու նշանակությունը ազգային տնտեսության զարգացման գործում:

5. Ուսումնասիրել և որոշարկել օտարերկրյա կապիտալի ներգրավման վիճակը Քիշ ազատ գոտում և դրա դերն ու նշանակությունը ազգային տնտեսության զարգացման գործում:

6. Դիտարկել զբոսարջության ոլորտը Քիշ ազատ գոտում և դրա դերը ազգային տնտեսության զարգացման գործում:

7. Վերլուծել Իրանի ազգային տնտեսության զարգացման ներկա վիճակը և առկա խոչընդոտներն ու հնարավորությունները:

Հետազոտության օբյեկտը և առարկան: Հետազոտության օբյեկտը Իրանի ազատ գոտիներն են, հատկապես, Քիշ ազատ գոտին, որը գտնվում է Պարսից ծոցի իրանական Քիշ կղզում:

Հետազոտության **առարկան** Քիշ ազատ գոտում իրականացվող արտաքին առևտրի (ներմուծումներ-արտահանումներ), կապիտալի ներգրավման և զբոսարջության զարգացման ոլորտների ուսումնասիրությունն է, կայուն զարգացման ուղղությամբ դրանց դերի ու նշանակության վերլուծությունը:

ժամանակագրական առումով հետազոտությունը ներառում է 1990-2015 թվականները:

Հետազոտության տեսական, տեղեկատվական և մեթոդական հիմքերը:

Ատենախոսության տեսական, տեղեկատվական և մեթոդական հիմքեր են ծառայում գիտական և վերլուծական ուղղվածության դրույթները, ինչպես նաև Իրանի և արտերկրի փորձագետների, տնտեսագետների, տեղական և միջազգային կազմակերպությունների ուսումնասիրությունների ու հայեցակարգերի հիմնադրույթները: Գիտական ուսումնասիրությունում կիրառվել են թվային շարքերի, դինամիկ փոփոխությունների, ընդհանրացումների, համեմատական վերլուծությունների և վիճակագրական հե տազոտությունների տարբեր մեթոդներ:

Ատենախոսության տեղեկատվական հիմք են հանդիսացել ազատ գոտիներին առնչվող Իրանի օրենքները և միջազգային իրավական ակտերը, վիճակագրական հրապարակումները, ինչպես նաև միջազգային վիճակագրական հրապարակումները:

Միաժամանակ, տվյալների հավաքագրման համար կիրառվել են արխիվային ու նորմատիվ փաստաթղթերի ուսումնասիրություն և տեսական գրականության վերլուծություն, իսկ տվյալների մշակման ու վերլուծության համար կիրառվել են վերլուծական, համեմատական, տրամաբանական ու սահմանման մեթոդները:

Հետազոտության հիմնական գիտական արդյունքները և նորույթը:

Իրականացված ուսումնասիրությունների հիման վրա ստացվել են տեսական և գործնական նշանակության մի շարք արդյունքներ, որոնցից, մասնավորապես, որպես գիտական նորույթ, կարևոր է առանձնացնել հետևյալները.

1.Վեր է հանվել ու բացահայտվել Իրանի ազգային տնտեսության զարգացման վրա Քիշ ազատ գոտու ազդեցության գլխավոր ուղիներն ու միջոցները: Քիշ ազատ գոտու նշանակության գնահատումը կատարարվել է երեք կարևոր բաղադրիչի՝ արտաքին առևտրի, կապիտալի ներդրման և զբոսարջության արդյունաբերության համալիր դիտարկմամբ, ինչը նոր մոտեցում է Իրանի ազգային զարգացման մակարդակը քննելու հարցում:

2.Իրանի ազգային տնտեսության զարգացման գործընթացում Քիշ ազատ գոտու դերի գնահատման համար օգտագործվել է վիճակագրական-վերլուծական համադրված ու համալիր մոդել և նոր մոտեցում:

3.Վեր է հանվել Քիշ ազատ գոտու տեղն ու դերը Իրանի տնտեսական զարգացման գործընթացում: Քիշ ազատ գոտու դերը դիտարկվել է ամբողջ Իրանի ազգային տնտեսության զարգացման համատեքստում և հիմնահարցը դիտարկվել է Քիշ ազատ գոտու և Իրանի ընդհանուր ազգային տնտեսության մաստաբների համադրական մոտեցմամբ:

Հետազոտության կիրառական նշանակությունը:

Հետազոտության արդյունքներն առաջարկվում է կիրառել Քիշ ազատ գոտում օտարերկրյա ներդրումների ներգրավման և արտաքին առևտրի զարգացման, հատկապես, արտահանումների ընդլայնման գործում: Բացի այդ, նկատի առնելով զբոսարջության դերն ու նշանակությունը ազգային զարգացման գործում և Քիշ ազատ գոտու առկա ներուժն այս բնագավառում, հետազոտության

արդյունքները կարող են նպաստել Քիշ ազատ գոտում զբոսարջության ոլորտի զարգացմանը:

Ատենախոսության արդյունքների փորձարկումը և հրապարակումները:

Ատենախոսության փորձաքննությունը կատարվել է ԵՊՀ-ի տնտեսագիտության ամբիոնի նիստում և մի շարք միջազգային գիտաժողովներում: Գիտական ուսումնասիրության հիմնական արդյունքներն արտացոլված են հեղինակի կողմից հրատարակված վեց գիտական հոդվածներում:

Ատենախոսության կառուցվածքը և ծավալը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացությունից, առաջարկություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից: Հետազոտության ընդհանուր ծավալը կազմում է 142 էջ:


ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության ***ներածությունում*** հիմնավորված են ատենախոսության թեմայի արդիականությունը և անհրաժեշտությունը, ներկայացվել են դրա նպատակներն ու խնդիրները, ատենախոսության տեսական, տեղեկատվական և մեթոդաբանական հիմքերը, հետազոտության օբյեկտն ու առարկան, գիտական նորույթը և ատենախոսության գործնական արդյունքների կիրառական նշանակությունը:

Հետազոտության առաջին՝ **«Ազատ գոտիների դերը կայուն զարգացման գործընթացում»** գլխում ներկայացվել են ազատ գոտիների գործունեության տեսամեթոդական և իրավական հիմքերը, դրանց դերը տնտեսական զարգացման, ինչպես նաև զատ գոտիների դերը երկրի տնտեսական զարգացման ռազմավարության իրականացման գործում:

Իրանում ազատ գոտիների ստեղծման պատմությունից երկար տարիներ չեն անցել, այդ իսկ պատճառով չկան մեծ թվով ուսումնասիրություններ ներքին ու օտարերկրյա կապիտալի ներգրավման և արտահանումների ծավալների ընդլայնման վերաբերյալ:


Առևտրային ազատ գոտիների սկիզբը իր բուն և մերօրյա իմաստով դրվեց 1888թ. Համբուրգում, որի նպատակն էր մի շարք ապրանքներ արտահղել, որոնք չպետք է մրցակցեին ներքին շուկայի հետ և նախատեսված էին հիմնականում արտահանման նպատակով: Համբուրգի ազատ նավահանգիստը մեծ հաջողություններ արձանագրեց և դրանից ոգևորված ստեղծվեցին այլ ազատ գոտիներ: Ընդհանուր առմամբ, ազատ գոտիների թիվը զգալիորեն աճել է վերջին հինգ տասնամյակների ընթացքում: Դրանց վիճակագրական տվյալների դինամիկան ներկայացված է ստորև բերված նկարում:



Economist.com

Գծանկար 1.1 Ազատ տնտեսական գոտիների քանակը 1959-2014թթ.¹

1970-ականներին ասիական շատ երկրների զարգացման ծրագրում շրջադարձ տեղի ունեցավ դեպի արտահանումների ընդլայնման մոտեցումը, այդ իսկ պատճառով ստեղծվեցին արտահանվող ապրանքների վերամշակման ազատ գոտիներ Մալագիայում, Շրի Լանկայում, Թայլանդում և Ֆիլիպիններում: Նույնիսկ մի շարք երկրներ, ինչպես օրինակ Հնդկաստանը, Պակիստանը և Ինդոնեզիան, որոնք դեռևս շարունակում էին ներմուծումների փոխարինման ռազմավարությունը, ձեռնարկեցին արտահանումների վերամշակման գոտիների ստեղծմանը (Abrishami, Mehrara, Irannejad, 2010): Ազատ գոտիների տեղաբաշխումն աշխարհում ներկայացված է ստորև բերված քարտեզում:



Գծանկար 1.2 Ազատ գոտիներն աշխարհի տարբեր տարածաշրջաններում²

Ամբողջ աշխարհում ազատ գոտիների թվային աճին զուգընթաց փոխվել են նաև նրանց նպատակները: Եթե մինչև երկրորդ համաշխարհային պատերազմը ազատ գոտիների գլխավոր նպատակներն էին ապրանքների պահեստավորումը, ապրանքների տեղափոխումը մեկ փոխադրամիջոցից մյուսը, ապրանքի կրկնակի արտահանումը, ապա դրանից հետո՝ ՕՈՒՆ ներգրավում, զբաղվածության խթանում, արտահանումների ընդլայնում, տեխնոլոգիաների ներմուծում:

Զարգացման առաջին և երկրորդ ծրագրերում Իրանի պետությունը փորձում էր առաջին հերթին ներդնել ազատ գոտիների ինստիտուտը և այն օգտագործել

¹ <http://www.economist.com/news/leaders/21647615-world-awash-free-trade-zones-and-t>

² www.free+zones+map&tbm=isch&itbo=u&source=univ&sa=X&ved

ոչ-նավթային արտահանումների և կրկնակի վերամշակվող արտահանումների ընդլայնման ուղղությամբ: Երրորդ ծրագրում նկատելի է պետական ռազմավարության շրջադարձը, այսինքն ներմուծումների փոխարինման ռազմավարությունից անցումը դեպի արտահանումների խրախուսման ռազմավարություն, որի առաջին նախանշաններն, իհարկե, կային դեռ երկրորդ ծրագրում: Ջարգացման չորրորդ ծրագրում պետությունը ձգտում է զսպել սղաձը և խթանել զբաղվածությունը, հետևաբար ազատ գոտիների գործառույթները պետք է արտահայտվեն ազատ գոտիների նպատակներում և գործառույթներում: Պետք է Իրանի մասնաբաժինը համաշխարհային առևտրում հասցնել առնվազն մեկ տոկոսի, որը ներկայումս ավելի ցածր է, քան 0.5 տոկոսը:

Քիչ կղզին հայտնի է «Պարսից Ծոցի մարգարիտ» անվամբ: Քիչի մեծությամբ ու փառքի մասին են վկայում նրա հյուսիսային հատվածում մնացած պատմական ավերակները (Մահմուդյան, 1998/9 թ. 20 շ. 137): Կղզին մեծ դեր ունի Իրանի ներքին զբոսաշրջության զարգացման գործում, տարեկան 1 միլիոն իրանցիներ երկրի տարբեր կողմերից ճամփորդում են այս կղզի: Բացի այդ, կարևոր է հաշվի առնել, որ ներդրողները մինչև 15 տարի ազատված են հարկերից, արտերկրացիների համար չկա վիզային ռեժիմ, արտարժույթի դուրս բերման լիակատար ազատություն կա, բանկային համակարգը ձկուն է, վարչարարական գործերը կատարվում են շատ արագ, Քիչի արդյունաբերական-արտադրողական ճյուղերի համար հումքի և սարքավորումների ներկրումն ազատված է մաքսերից, ինչպես նաև տնտեսական աշխուժությանը միտված այլ արտոնություններ:

Կարևոր է ազատ գոտիների ազդեցությունը ոչ միայն ազգային տնտեսության, այլև համաշխարհային տնտեսության ներսում կայուն զարգացում ապահովելու գործընթացի վրա: Ազատ գոտիները կարևոր է դիտարկել որպես տնտեսական զարգացման լծակ՝ մասնավոր հատվածի ակտիվացման, օտարերկրյա ներդրում-ների ներգրավման, տեխնոլոգիաների փոխադրման, զբաղվածության խթանման և միջազգային շուկաներում ինտեգրվելու ուղղությամբ:


Ասիական երկրների փորձը ցույց է տալիս, որ տարածաշրջանի այն երկրներում, որտեղ գերակշռում է պետական տնտեսությունը և գործում են մաքսային, արտարժույթային, վարչական և այլ տիպի խոչընդոտող օրենքներ ու կանոնակարգեր, ազատ գոտիների հիմնադրումը նպաստում է այդ խոչընդոտների կրճատմանը և նոր գիտելիքների, հմտությունների ու կարողությունների ձեռքբերմանը: Զինաստանում, Թուրքիայում և ԱՄԷ-ում ներկայումս գործում են ավելի քան 210 ազատ գոտիներ:

Ներմուծումների կամ ներկրումների փոխարինման մոտեցումը ներքին տնտեսության զարգացման ռազմավարություններից մեկն է: Այս ուղեգիծը որդեգրած երկրները զարգացած երկրներից արդյունաբերական ապրանքներ ներկրելու փոխարեն, գերադասում են օգտագործել ներքին արտադրանքն ու ապրանքները և դրանք ստեղծել երկրի ներսում: Այսպիսի երկրները ներմուծումների փոխարեն ընտրում են արդյունաբերականացման ուղին և զարկ տալիս ռազմավարական նշանակություն ունեցող մի շարք

ապրանքատեսակների (պողպատի, ցորենի, ցեմենտի և այլն) արտադրությանը (Griffin, 1980):


Ինչ վերաբերվում է արտահանման խթանմանը, ապա այս ռազմավարությունն Ա. ձևավորում է նոր շուկաներ, Բ. կարգավորում է արտահանումների եկամուտների տատանումները, Գ. բարձրացնում է արտահանումներից ստացվող արժույթային եկամուտները: Այն դեպի արտաքին աշխարհի միտված քաղաքականություն է և նպատակ ունի արտադրել այն ապրանքատեսակները, որոնք համեմատական առավելություն ունեն: Այս ռազմավարությունն, ի տարբերություն ներմուծումների փոխարինման քաղաքականության, հովանավորում և խթանում է «ազատ առևտուրը»: Նման ռազմավարություն են կիրառել Եգիպտոսը, Չինաստանը, Հարավային Կորեան և Մալազիան: Ատենախոսության այս բաժնում շարադրված են նաև արտահանման խթանման ռազմավարության ամենակարևոր առանձնահատկությունները (Tekere, 2000): Իհարկե, արտահանումների ընդլայնման ռազմավարությունն այն դեպքում է նպաստում ազգային շահերի իրացմանը, երբ պետությունը վերահսկում է գործընթացները և արդյունավետ կարգավորում դրանք (Jalali Naini & Mohammadi, 1996): Միաժամանակ, առանձնահատուկ ռեսուրսների շնորհիվ տվյալ երկիրը ձեռք է բերում մենաշնորհային կամ էլ մասամբ մենաշնորհային տեղ ու դիրք այս ոլորտում (Swarbrooke, 1991): Տնտեսական զարգացման արդյունքում զարգանում և ընդլայնվում են մի շարք հիմնային ենթակառուցվածքներ, որոնք զբոսաշրջության զարգացման նախադրյալներն են՝ տրանսպորտային և հաղորդակցության ցանցերը, տեղեկատվական տեխնոլոգիաները, դրամի էլեկտրոնային փոխանցումը, կացարանները և հյուրանոցները, ռեստորանները և սննդի կենտրոնները, հանրային առողջապահությունը, ժամանցային ու հանգստյան կենտրոնները, շուկաներն ու առևտրային կենտրոնները և այլն (Gordon, 2007):

Երկրորդ՝ «**Իրանի ազատ տնտեսական գոտիներում արտաքին առևտրի, կապիտալի ներգրավման և զբոսաշրջության դերը կայուն զարգացման գործընթացում**» գլխում վերլուծվել են արտաքին առևտրի, կապիտալի ներգրավման և զբոսաշրջության արդյունաբերության ազդեցությունը տնտեսական զարգացման վրա: Այս գլխում ուսումնասիրվում են արտաքին առևտրի (արտահանումների և ներմուծումների) դերը Իրանի տնտեսության մեջ, ՕՌՄ դերը Իրանի ազատ գոտիներում և զբոսաշրջության տեղն ու դերը աշխարհում և Իրանում: Ներմուծումներն այն դեպքում կարող են դրական համարվել, երբ ներդաշնակ ու համապատասխան լինեն տնտեսության հետ և սերտորեն կապակցված՝ տնտեսության և ՀՆԱ-ի արդյունավետ կառուցվածքին: Ստորև բերված տվյալները ցույց են տալիս, որ աշխարհի մի շարք զարգացած արդյունաբերական երկրները մեծ ծավալի և արժեքի ներմուծումներ են կատարում, հետևաբար ներմուծումների չափն ու ծավալը ուղիղ համեմատական չէ երկրի տնտեսական զարգացմանը և աճին: Իսկ ներկայումս ամենախոշոր ներմուծողների առաջին տասնյակը հե տևյալ տեսքն ունի.



Պճանկար 2.1 Առավել շատ ներկրող երկրների տասնյակը 2015թ.³

Ինչպես վկայում են թվերը, միայն վերջին տասնհինգ տարիների ընթացքում արտահանման ուղղվածության ազատ գոտիների, պարկերի թիվը աշխարհում աճել է մինչև 58, իսկ ներգրավված ընկերությունների թիվը հասել է 650: Զարգացող երկրներից առավել տպավորիչ է հատկապես Եգիպտոսի օրինակը: Երկրի ներդրումային գործակալության պաշտոնական տվյալների համաձայն, 2015թ. ազատ գոտիներից արտահանման ծավալները անցել են 10.1 մլրդ ԱՄՆ դոլարի սահմանը: Ըստ որում, ազատ գոտիներից արտահանման գործում ներգրավված ընկերությունների թիվը գնալով աճում է՝ միայն մեկ տարում 1527-ից հասնելով 1623⁴-ի: Առանձնահատուկ կարևորություն են ձեռք բերել արտահանման ուղղվածության վերանշակող ազատ գոտիները:




³ <http://www.indexmundi.com/g/r.aspx?t=10&v=89>

⁴ <http://www.albawabaeg.com/75413>

Գծանկար 2.2. Արտահանման ուղղվածության վերամշակող ազատ գոտիները⁵

Իրանի արտաքին առևտրի կառուցվածքային վերլուծությունը ցույց է տալիս, որ Իրանի արտահանումների գլխավոր մասը նավթային արտահանումներն են կազմում: Մյուս կողմից, միջնորդ ապրանքների և կապիտալային ապրանքների ներմուծումը կախված է նավթային եկամուտներից, հետևաբար երկրի տնտեսությունը ենթարկվում է անկայունության (Eghbali & Halafi & Gaskari, 2003): Իրանի արտաքին առևտրի պատմությունը ցույց է տալիս, որ այս երկիրը հիմնականում ընտրել է ներմուծումները տեղական արտադրանքով փոխարինելու և ոչ թե արտահանումների խրախուսման քաղաքականությունը: Վերջին տասնամյակներին քաղաքական խնդիրների պատճառով Իրանի տնտեսական կապերը լուրջ դժվարություններ ունեցան, ինչի արդյունքում իրանական ապրանքների արտադրության ծախսերը ավելի բարձր են արտասահմանյան ապրանքների համեմատությամբ, քանզի իրանական ապրանքները ցածր գնով են վաճառում արտերկրի առևտրականներին, իսկ տեխնոլոգիաները ձեռք են բերում ավելի թանկ գնով: Հետևաբար, ձգնաժամից դուրս գալու միակ ելքը Իրանի տնտեսության մրցունակության բարձրացումն է: Թեև արտահանումների զարգացման ուղղությամբ արտոնություններ են տրվել արտահանողներին, սակայն ներքին շուկայի ոչ-մրցակցային լինելու պատճառով այս քայլերը չեն կարողացել ակնկալվող արդյունքներն արձանագրել: Իրենց հերթին, օտարերկրյա ուղղակի ներդրումների շնորհիվ հնարավոր է դարձել ապահովել շոշափելի տնտեսական աճ և անցնել կայուն զարգացման փուլի: Հաջորդող տարիներին օտարերկրյա ուղղակի ներդրումների գրավչությունը պահպանվել է հիշյալ երկրներում, որոնց մեծ մասը զարգացած երկրներն են: Ուսումնասիրությունները վկայում են, որ օտարերկրյա ուղղակի ներդրումների գլոբալ հոսքերի ոլորտում կրճատման միտումն ուղղակի նախորդել է ձգնաժամին, երբ մնացած ցուցանիշների գծով կտրուկ անկում չի նկատվել:



Գծանկար 2.3 Իրանի ՕՈՒՆ դինամիկան 2006-2014թթ.⁶

⁵ <https://www.global+exports+from+free+zones+2015>

⁶ <http://www.tradingeconomics.com/iran/foreign-direct-investment>

Արտաքին ներդրումների աճի դինամիկան ցույց է տալիս, որ Իրանը 2012 թվականին աշխարհում գրավել է 35-րդ տեղը, իսկ տարածաշրջանի երկրների շարքում՝ 2-րդ տեղը: Կարևոր է հաշվի առնել նաև այն իրողությունը, որ Իրանից դուրս ապրում են բազմաթիվ իրանցիներ, այդ թվում մեծ թվով գործարարներ, ովքեր առևտրատնտեսական հարաբերություններ ունեն իրենց հայրենի երկիր Իրանի հետ, որտեղ կարևոր դեր է հատկացվում ծառայությունների ոլորտին: Դրանցից առանձնահատուկ նշանակություն ունի զբոսաշրջությունը, որի մրցունակության ցուցանիշով Համաշխարհային տնտեսական համաժողովի 2015թ. զեկույցի համաձայն Իրանը գրավում է 97-րդ տեղը, իսկ Հայաստանը՝ 89-րդ տեղը⁷: Մյուս կողմից, ակնկալվում է, որ Իրանի հանդեպ պատժամիջոցների վերացումը կարող է լայն հեռանկարներ բացել ինչպես տարածաշրջանում և գլոբալ մասշտաբով Իրանի դերի մեծացման, այնպես էլ Հայաստանի հետ երկկողմ կապերի զարգացման իմաստով: Իրանական կողմը նաև հետաքրքրված է Հայաստանի հետ հանքարդյունաբերության, զբոսաշրջության, արդյունաբերության և այլ ոլորտներում համագործակցությամբ: 2014թ. տվյալներով իրանցի զբոսաշրջիկների՝ ամենից շատ այցելած երկրների թվում Հայաստանը զբաղեցրել է երրորդ տեղը՝ համապատասխանաբար Թուրքիայից և Իրաքից հետո, կազմելով 146.184 մարդ: Հայաստանում զբոսաշրջության զարգացմանն ուղղված քայլեր են իրականացվում՝ ՀՀ Կայոց ծորի Ձերմուկ քաղաքում, «Ձնեմարդուկ» ամենամյա փառատոնը, Արմավիրի մարզի Սուսալեռ համայնքում, «Ուդուլի» տոլմայի ավանդական փառատոնը, Տավուշի մարզի Դիլիջան քաղաքի «Մշակութային վերածնունդ» խորագրով գորգագործության և դեկորատիվ-կիրառական արվեստների փառատոնը, Լոռու մարզի Ախթալա համայնքում Խորովածի, երաժշտության և արվեստի և Օծունի գանձեր համահայկական փառատոնները: Հայաստան այցելող իրանցի զբոսաշրջիկների թիվը զգալիորեն ավելանում է Նոյրուզ-Բայրամի շրջանում:

Երրորդ՝ «Քիշ ազատ գոտու կայացումը որպես ազգային տնտեսության կայուն զարգացման մրցունակ մոդել» գլուխը նվիրված է Քիշ ազատ գոտում արտաքին առևտրին, կապիտալի ներգրավմանն ու զբոսաշրջության ոլորտին և երկրի ազգային զարգացման գործում դրանց ազդեցությանը: Այս գլխում դիտարկվում են Քիշ ազատ գոտում արտաքին առևտուրը, Քիշ ազատ գոտու տեղն ու դերը ազգային տնտեսության արտահանման կարողության մեջ, Քիշ ազատ գոտու տեղն ու դերը ազգային տնտեսության ներմուծման մեջ, ներքին և օտարերկրյա ներդրումների հոսքերում, ինչպես նաև Քիշ ազատ գոտու տնտեսական, սոցիալական, մշակութային և զբոսաշրջության ցուցանիշները, Քիշ ազատ գոտու տեղն ու մասնաբաժինը Իրանի զբոսաշրջության ոլորտում և ուսումնասիրվում է այս ոլորտի վիճակագրությունը:

Մեր ուսումնասիրությունները վկայում են, որ Քիշ ազատ գոտում ձևավորված տնտեսվարման պայմաններն ու այդ միջավայրում տեղական և արտերկրի ընկերությունների կողմից ծավալած ձեռնարկատիրական ծրագրերի իրագործումն իր դրական ազդեցությունն է թողնում Իրանի արտաքին առևտրի

⁷ <http://reports.weforum.org/travel-and-tourism-competitiveness-report-2015/economy>

հաշվե կշռի, մասնավորապես, արտահանման ծավալների ավելացման վրա: Մասնավորապես, Քիշ ազատ գոտուց արտահանվող ապրանքների դիտարկումը ցույց է տալիս, որ այս տարածաշրջանը ներկայումս բացառիկ նշանակություն ունի Իրանի արտահանումների ոլորում, սակայն նկատի առնելով Քիշ ազատ գոտու ներուժը և նրա տնտեսական ռազմավարական տեղն ու դիրքը, այս շրջանն ի վիճակի է շատ ավելի մեծ դեր ստանձնել և մեծացնել իր արտահանումների ծավալն ու արժեքը: Քիշը կարող է առանձնակի նշանակություն ունենալ Պարսից Օղջի հարևան երկրներին արտահանվող ապրանքների ոլորտում:

2005-2015թթ. Քիշ կղզուց տարբեր արտադրողական ապրանքների արտահանման, տրանզիտի, ժամանակավոր դուրսբերման և կրկնակի արտահանման վիճակագրական տվյալները ցույց են տալիս, որ այս ժամանակահատվածում արտահանված ապրանքների դոլարային արժեքը համընթաց է աճի դինամիկային, թեև այդ աճը շարունակական չէ, այլ զուգակցված է վայրիվերումներով: Առանձնահատուկ կարևորություն են ձեռք բերել Քիշ ազատ գոտուց արդյունաբերական ապրանքների արտահանումները: Քիշ ազատ գոտում արտադրված արդյունաբերական ապրանքների արտահանման ցուցանիշների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ 2005-2015 թվականներին դրանք աննշան թիվ են կազմել Իրանի արտահանումների ընդհանուր համակազմում՝ լավագույն դեպքում հասնելով մոտ 25 տոկոսի, իսկ վատագույն դեպքում՝ 5 տոկոսի: Ընդհանուր առմամբ, Քիշ ազատ գոտին՝ որպես Իրանի արտահանումների ու ներմուծումների կարևոր դարպաս, զգալի ազդեցություն է թողնում Իրանի առևտրային ոլորտի և գործընթացների վրա, ինչը ցույց է տալիս, որ սույն հետազոտության անկախ փոփոխականները արտահանումներն ու ներմուծումները ուղղակիորեն ազդում են կախյալ փոփոխականի վրա:

Ժամանակակից ձեռնարկատիրության, ինչպես նաև տնտեսական ազատ գոտիների գործունեության ամենակարևոր առանձնահատկություններից մեկը ներքին ու արտաքին կապիտալի ներգրավումն է, որոնց նկատմամբ սովորաբար պետական աջակցության տարբեր միջոցներ են օգտագործվում՝ արտոնությունների, վարկերի, հովանավորչության, ընթացակարգերի դյուրացման տեսքով: Տնտեսական ցուցանիշների տարբեր տարիների դինամիկայի վերլուծությունը, ինչպես նաև Քիշ ազատ գոտում կատարված ներդրումների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ներդրումների մեծացումն ու ընդլայնումը խթանում է այս տարածաշրջանի զարգացումը, ինչը և հաստատում է սույն հետազոտության առաջադրած հիմնական վարկածը: 2005-2015թթ. Քիշ ազատ գոտում ոչ-արդյունաբերական ոլորտներում ներդրումների ծավալի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այն ունեցել է նկատելի վայրիվերումներ:

Ինչ վերաբերվում է ազատ գոտիների հաջողության ու արդյունավետության խնդիրներին, ապա դրանք պայմանավորված են տարբեր գործոններով՝ սոցիալ-տնտեսական, քաղաքական, մշակութային, օրինական, իրավական և այլ բնույթի, նաև աշխարհագրական վայրով ու դիրքով: Կարևոր է նաև, որ Իրանի

առևտրային և մյուս օրենքներում նշված տարբեր ընկերությունները և ոչ-առևտրային հիմնարկները կարող են առանց բյուրոկրատական ավելորդ քաշքշուկների գրանցվել Քիշ ազատ գոտում, որն ունի մի շարք առանձնահատկություններ և տարբերվում է Իրանի այլ վայրերում գործող կանոններից:

Տնտեսության և մասնավորապես, զբոսաշրջության զարգացման համար կարևոր է հաշվի առնել, որ Իրանի մշակույթն ու քաղաքակրթությունը շատ հնամենի արմատներ ունեն և հասնում են մինչև մարդկային կյանքի վաղնջական ժամանակները: Կարևոր է հաշվի առնել այն իրողությունը, որ Քիշ կղզին իր գալստիկական ու մշակութային առանձնահատկություններով ու գրավչություններով առանձնակի տեղ է գրավում (Edgell, 2006): Մասնավորապես, բացի այն, որ Քիշ կղզում զբոսաշրջության արդյունաբերությունը խթանում է զբոսաշրջության ոլորտն Իրանում, այն անուղղակիորեն ազդում է նաև երկրի մակրոտնտեսական ցուցանիշների բարելավման, հետևաբար՝ տնտեսական զարգացման վրա: Այդ ցուցանիշներից են օտարերկրյա ներդրումների չափը, արտահանումներ-ներմուծումներ արժեքը, ստեղծված աշխատատեղերը, կղզում ստեղծված ավելացված արժեքը, որոնց արդյունքները ազդում են թե՛ կղզու և թե՛ ամբողջ Իրանի տնտեսական զարգացման վրա: Այս առումով կարևոր է նախ վերլուծել Քիշ ազատ գոտու զբոսաշրջային ոլորտի թողած ուղղակի ազդեցությունը: Մասնավորապես, հարկ է անդրադառնալ Քիշ ազատ գոտում սոցիալ-մշակութային և զբոսաշրջային ցուցանիշներին և բնակչության թվաքանակի և տարեկան միջին աճի դինամիկ փոփոխություններին:

Քիշ կղզում զբոսաշրջության ընդլայնման ու զարգացման հետևանքներից և ազդեցություններից մեկը օտարերկրյա ներդրումների խթանումն ու ընդլայնումն է, որը զարկ տալով հյուրընկալ երկրի տնտեսական բարգավաճմանը, բարձրացնում է նաև բուն երկրի զբոսաշրջության արդյունաբերության մակարդակը, որն էլ իր հերթին կրկին ակտիվացնում է օտարերկրյա ներդրումների ներգրավումը: Պետության ներկայությունը ներդրումների ոլորտում նվազագույնի է հասցված Քիշ ազատ գոտում, իսկ կղզու հիմնական եկամուտները ապահովում են ուղևորների մուտքի տուրքերից, ապրանքների արտահանման-ներմուծուման մաքսատուրքերից, լիցենզիայի հանձնման համար գանձվող գումարներից և հողատարածքի վաճառքից: Այս աղբյուրները կարողանում են բարձր եկամուտներ ապահովել կղզու համար, քանի որ այս տարածաշրջանում զարգանում է ձեռնարկատիրությունը և շինարարական աշխատանքները: Քիշում անշարժ գույքի աննախադեպ թանկացումը երկրի այլ շրջանների համեմատությամբ վկայում է նրա տնտեսական կարևորության ու նշանակության, ինչպես նաև Իրանի տնտեսության զարգացման գործում Քիշ ազատ գոտու զբոսաշրջության արդյունաբերության դերի բարձրացման մասին: Մեր համոզմամբ, առաջիկա տարիներին, հաշվի առնելով Արևմուտքի կողմից տնտեսական պատժամիջոցների վերացումը և Իրանի շուրջ ձևավորվող բարենպաստ աշխարհաքաղաքական միջավայրը, վերոհիշյալ դրական միտումները կարող են շարունակվել և ավելի արագ ընթացք ստանալ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

1. Քիչ ազատ գոտին Իրանի մյուս ազատ գոտիների համեմատությամբ ունի բացառիկ տեղ ու դիրք, և դա պայմանավորված է նրա աշխարհագրական առանձնահատուկ դիրքով, բնակլիմայական պայմաններով:

2. Զարգացման գլխավոր բաղադրիչների՝ արտաքին առևտրի (ներմուծում-արտահանում), ներքին ու օտարերկրյա ներդրումների ներգրավման և իրանցի ու օտարերկրացի զբոսաշրջիկների հոսքերի քննումը ցույց է տալիս, որ այդ բաղադրիչներից ամեն մեկը բավականին ազդեցություն է գործում Իրանի տնտեսական զարգացման վրա:

3. Քիչ ազատ գոտին յուրահատուկ դեր և նշանակություն ունի Իրանի արտաքին առևտրի ոլորտում, որով առանձնանում է մյուս բոլոր իրանական ազատ գոտիներից:

4. Ուսումնասիրություններն ու դիտարկումները ցույց են տալիս, որ Քիչ ազատ գոտու արտաքին առևտրի ոլորտում արդյունաբերական ու ոչ-արդյունաբերական ապրանքների ներմուծման համեմատությամբ այլ ապրանքների ներմուծման մասնաբաժինը շատ փոքր է, ինչը մտահոգության առիթ է տալիս մասնագետներին, քանի որ արդյունավետ քաղաքականություն չմշակելու և տեղական ապրանքատեսակների արտահանումը չխթանելու դեպքում, Քիչ ազատ գոտին և մյուս ազատ գոտիները գործնականում Իրանի համար կդառնան արտերկրի ապրանքների ներմուծման դարպասներ:

5. Արտասահմանյան բարձրորակ ապրանքների ներմուծումը եթե զուգակցվի արտահանումների և կրկնակի արտահանումների ընդլայնմամբ, այդ դեպքում կարող է տնտեսական նոր հնարավորություններ ստեղծվել Քիչ ազատ գոտու դերի մեծացման և Իրանի արտաքին առևտրի զարգացման գործում:

6. Զբոսաշրջության և հյուրանոցային ոլորտները, ժամանցային տարատեսակ գործունեությունը, ապրանքատեսակների տարբեր շուկաները նպաստավոր ենթահող են պատրաստում օտարերկրյա ներդրումների համար:

7. Իրանի տնտեսական զարգացման գլխավոր խոչընդոտներից մեկը ներքին արտադրական ներդրումների պակասը և արտաքին ներդրումների ներգրավման անկարողությունն է: Տնտեսական ազատ գոտիները տնտեսական որոշակի աջակցություն և հովանավորում ունենալու դեպքում կարող են մեծապես ներգրավել արտաքին ներդրումները:

8. Քիչ ազատ գոտում տնտեսական զարգացման, ներքին ու օրտարերկրյա ներդրողների շահագրգռման ու նաև արտաքին առևտրի (ներդրում-արտահանում) խթանման միջոցներից ու գործոններից մեկը զբոսաշրջության ոլորտի զարգացման մեծ նե րուժն է այս կողմ:

9. Զբոսաշրջության ուղղակի կամ անուղղակի զարգացումը Քիչ ազատ գոտում մեծ ազդեցություն ունի այս տարածաշրջանի տնտեսական զարգացման և ազգային եկամուտների բարձրացման վրա: Զբոսաշրջության ոլորտն իր արագ շահութաբերության և նրա հետ առնչվող տնտեսական այլ ճյուղերի բազմազանության պատճառով կարող է շարժիչ ուժ լինել տնտեսական զարգացման ու բարգավաճման համար:

10.Քիշը կարող է ամբողջ երկրի համար դառնալ զբոսաշրջիկներին մոտիվացնելու և ներգրավելու միջոց: Օտարերկրացի զբոսաշրջիկները այցելելով Քիշ և ծանոթանալով իրանական մշակութուն ու քաղաքակրթությանը, կարող է նաև հետաքրքրվեն Իրանի այլ վայրեր ճամփորդելու և այցելելուն՝ զարկ տալով Իրանի զբոսաշրջությունը ամբողջ երկրի մասշտաբով:

11.Զբոսաշրջությունը որպես նվազ ծախսատար, բարձր արդյունավետությամբ ու կապիտալի արագ վերականգնմամբ մի ոլորտ և տնտեսական այլ բնագավառների վրա ներգործելու իր առանձնահատկությամբ՝ Քիշ ազատ գոտու ամենակարևոր գործոնն է, որը ամենաշատն է ազդում Իրանի տնտեսության զարգացման վրա: Բացի այդ, Քիշ ազատ գոտում զբոսաշրջության զարգացման մոդելը կարող է օրինակ հանդիսանալ և կիրառվել Իրանի այլ շրջաններում ևս զբոսաշրջության խթանման ծրագրերում:

12.Սույն հետազոտությունը բացահայտում է, որ Քիշ ազատ գոտին երեք ուղիներով ու ձևերով կարող է ազդել Իրանի ազգային տնտեսության զարգացման վրա: Քիշը կարող է դառնալ արտաքին առևտրի կարևոր մի տարածաշրջան և այդ ձևով խթանել Իրանի ազգային տնտեսությունը: Սյուս միջոցը և ուղին ներքին ու արտաքին ներդրումների ներգրավումն է արտադրողական ոլորտներում, որով Քիշ ազատ գոտին կարող է մեծապես նպաստել Իրանի ազգային զարգացմանը:

Առենախոսության հիմնական արդյունքները ներկայացված են հետևյալ աշխատություններում:

1. Նաջաֆի Մ., «Քիշ Ազատ գոտու տեղն ու դերը Իրանի ներմուծումների ոլորտում», «Այլընտրանք» գիտական հանդես, 2014 թ., #4, հոկտեմբեր-դեկտեմբեր, էջ 56-60:

2. Նաջաֆի Մ., «Քիշ Ազատ գոտու դերը ԻհՀ արտահանումների ոլորտում», «Այլընտրանք» գիտական հանդես, 2014թ., #4, հոկտեմբեր-դեկտեմբեր, էջ 109-114:

3. Najafi M., Kamran Yeganegi, The role of Kish free zone in Islamic Republic of Iran Development, PARIPEX Indian Journal of Research, Research paper, Engineering, Volume 5, Issue 5, May, 2015, pp.19-21, <http://www.paripex.in/>.

4. Najafi M., Sustainable development and the role of free zones, PARIPEX Indian Journal of Research, Research paper, Economics, Volume 4, Issue 5, May, 2015, pp.3-7, <http://www.worldwidejournals.com/ijar/>.

5. Նաջաֆի Մ., «Ներքին և օտարերկրյա կապիտալի ներգրավման տնտեսական նախապայմանները Քիշ ազատ գոտում», «Այլընտրանք» գիտական հանդես, 2016թ., #1, հունվար-մարտ, էջ 458-463:

6. Նաջաֆի Մ., «Զբոսաշրջության և տնտեսության այլ ճյուղերի դերը ազգային և տարածաշրջանային զարգացման ծրագրերում», «Այլընտրանք» գիտական հանդես, 2016թ., #1, հունվար-մարտ, էջ 464-471:

7. The Role of Tourism in Development of Kish Free Zone , Asian Research Journal of Business Management, Vol.35 ISSUE 4,ISSN:2321-9246, 2016, pp.33-40, <http://www.arjbm.com/>

МОХАМАД АЛИ НАДЖАФИ
РОЛЬ ТОРГОВО-ПРОМЫШЛЕННЫХ СВОБОДНЫХ ЗОН В ДЕЛЕ
ЭКОНОМИЧЕСКОГО РАЗВИТИЯ
(НА ПРИМЕРЕ СВОБОДНОЙ ЗОНЫ «КИШ» ИРАНА)

Автореферат диссертации на соискание ученой степени кандидата экономических наук по специальности

08.00.02- "Экономика, управление хозяйством и его отраслей "

Защита диссертации состоится 25 ноября 2016, в 13:30 часов на заседании Специализированного совета 015 ВАК РА по экономике, действующего в Ереванском государственном университете по адресу:
0009 Ереван, ул. Х. Абовяна 52.

РЕЗЮМЕ

Цель и задачи исследования: Основная цель диссертации состоит в исследовании деятельности свободных экономических зон Ирана, с точки зрения реализации основных экономических целей, что особенно важно в расширении и диверсификации экспорта, создания рабочих мест, предоставлении валютных поступлений, привлечении отечественного и иностранного капитала, импорта передовых тех-нологий, а также создания систематизированных и координированных отношений между национальной экономики и мировой экономики.

На основании вышеуказанной цели разработана соответст-вующая методология и предложены подходы для достижению ос-новной цели исследования, а также поставлены и решены следующие задачи:

1. исследовать текущее состояние внешней торговли (импорт-экс-порт) Ирана;
2. изучить состояние привлечения иностранного капитала в Ира-не;
3. изучить ситуацию индустрии туризма в Иране;
4. провести анализа внешней торговли (импорт-экспорт) свобод-ной зоны «Киш», ее роли и значения в развитии национальной эконо-мики;
5. выявить и определить условия для привлечения иностранного капитала в свободной зоне «Киш» и ее значение в развитии соответст-вующей инфраструктуры в национальной экономике;
6. обосновать значение туристического сектора свободной зоны ,Киш» и его роли в развитии национальной экономики;
7. анализировать текущее состояние экономики Ирана, а также препятствия и возможности для развития национальной экономики.

Объект и предмет исследования. Объектом диссертационного исследования являются свободные зоны Ирана, особенно, свободная зона "Киш", расположенные в иранском острове Киш, находящиеся в Персидском заливе. Предметом исследования является изучение сферы внешней торговли (импорт-экспорт) осуществляемых в свободной зоне "Киш", а также исследование сектора туризма для привлечения капитала и анализ их роли и важности в направлении устойчивого развития. Хронологически исследование охватывает период 1990-2015.

Основные научные результаты и новизна исследования. Осново-вытаясь на результатах исследования и анализе исследований, получены следующие результаты теоретического и практического значения, которые представлены в виде научной новизны:

1. Выявлены и идентифицированы основные пути и средства влияния свободной зоны «Киш» на развитие национальной экономики Ирана. Оценка важности свободной зоны «Киш» проведена с помощью комплексного обследования трех основных компонентов - внешней торговли, капиталовложений и индустрии туризма, который представляет собой новый подход для рассмотрения уровня развития национальной экономики в Иране.

2. При оценке роли свободной зоны «Киш» в процессе развития национальной экономики Ирана используются комплексная и комбинированная статистическая-аналитическая модель и новый подход.

3. Выявлены и обоснованы место, значение и роль свободной зоны «Киш» в процессе экономического развития Ирана. Роль свободной зоны «Киш» исследована в контексте развития всего народного хозяйства Ирана: проблема рассматривается с помощью сравнительного анализа масштабов в общей национальной экономике Ирана.

MOHAMMAD ALI NAJAFI
THE ROLE OF TRADE AND INDUSTRIAL FREE ZONES IN ECONOMIC
DEVELOPMENT
(ON THE EXAMPLE IRAN "KISH" FREE ZONE)

The abstract of the Dissertation for receiving the academic degree of Doctor of
Economics in the field

08.00.02- "Economics, Management of the Economy and its Branches"

The defense of the Dissertation is scheduled to take place on November 25, 2016, at 13:30 at the session of Specialized Council 015 in Economics of Supreme Certifying Commission of the Republic of Armenia, acting at the Yerevan State University: 52 Kh.Abovyan Street, Yerevan 009 Ave.

ABSTRACT

The Purpose and Objectives of the Research: The main purpose of the dissertation is to investigate the activities of Iran's free trade zones, in terms of the implementation of the primary economic objectives, which is particularly important in the expansion and diversification of exports, job creation, provision of foreign exchange earnings, attract domestic and foreign capital, importing advanced technologies, as well as the establishment of systematized and well maintained relations between the national economy and the global economy.

Based on the above mentioned purpose, it has been required to set relevant methodology and propose approaches along with the objectives to meet the main purpose:

1. To examine the current state of foreign trade (import-export) of Iran;
2. To examine the condition of attracting foreign capital in Iran;
3. To examine the situation of tourism industry in Iran;
4. To analyze foreign trade (import-export) of Kish Free Zone and its role and importance in the development of the national economy;
5. To examine and define the conditions for attracting foreign capital in Kish Free Zone and its importance in the development of proper infrastructure in the national economy;
6. To study the tourism sector Kish Free Zone and its role in the development of national economy.
7. To analyze the current state of Iran's economy, as well as the obstacles and the opportunities for development of national economy.

The object and the Subject of the Research. The object of the Dissertation thesis is Iran's free zones, especially, "Kish" free zone, located in Iranian "Kish" island that is located in the Persian Gulf. The Subject of the Research is the study of "Kish" free foreign trade (imports-exports carried out in the area), and tourism sectors to raise capital, and the analysis of their role and importance of sustainable development. Chronologically, the study includes the 1990-2015 period.

The main results of scientific of research and the novelty. Based on the results of the study, and the analysis of the research, the following results of theoretical and practical importance are presented as scientific novelty:

1. Major ways and means of Kish Free Zone Iran's influence on the development of the national economy are revealed and identified. Assessment of the importance of Kish free zone is conducted with the help of complex examination of three essential components -- extracurricular external trade, capital investment, and tourism industry, which is a new approach to consider the level of national economy's development in Iran.

2. Complex and combined statistical and analytical model and a new approach for assessing the role of Kish free zone in the development of Iran's national economy are used.

3. The role of Kish Free Zone in Iran's economic growth has been justified. The role of Kish free zone has been observed in the context of the development of the entire national economy of Iran, and the issue is considered through the comparative approach of scales in the overall national economy of Iran.

نجمی
